

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ՅՈՒՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Շար. Բազմ. 1946 թ. 8, էջ 205)

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ

ԽԱՂՏՈՑ-ԱՌԻՋ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ

Բայց Արծն Հայրապետութեան աթոռանիստ ըլլալու սահմանուած չէր: Կամենաս խարէական ձեւով մը միայն կաթողիկոսը Անիէն հեռացուցեր էր, սպասելով յարմար առիթին զայն պատժելու: Եւ առիթը շուտով ներկայացաւ: Մերձաւոր մեծ տօնի մը, Պետրոս հանդիսադիր կ'ըլլայ ջրօրհնէքի արարողութեան, որ տեղի կ'ունենայ վերին Եփրատի ափունքը կազմող յորդախաղաց ջուրին մէջ, որ կարենոյ դաշտին մէջէն և Արածանիի մօտէն կ'անցնի: Արարողութիւնը տեղի կ'ունենայ, ինչպէս կ'ըսէ Լաստիվերտցի, « փառաւորապէս որպէս և վայել էր »: Միւսոնաթափութեան պահուն, կը գրէր նոյն պատմիչը, տաճիկ մարդ մը, բազմութենէն առաջ գալով՝ կը ներկայանայ « Բրիտանոնեայ լինել և մկրտուիլ խնդրելով: Պետրոս « հրամայէ նմա իջանել ի ջուրն »: Իսկ Միւսոնակիւրը՝ Միւսոնի շէշը առնելու ատեն՝ շէշը կը կոտորի, Միւսոնը առաւտապէս կը թափի « ի վերայ նորակեքին և ջրոյն », բայց կոտորեալէն բեկոր մը Պետրոսի ձեռքը կարեկեր կը խոցէ, և յորդուիւն արեան կը խառնուի Միւսոնին¹ »:

Այս թեթեւ արկածը ձախող տպաւորութիւն մը թողուց ժողովուրդին վրայ,

և ամէնքը, ինչպէս կ'ըսէ նոյն աւանատես պատմիչը, կատակով սկսան ըսել թէ « չէ քարոյ ինչ նշան, որ և ի նմին աւուր կատարեցաւ իսկ »:

Եւ յիշատի հանդէսը կը շարունակուի, և ճաշի ժամուն կերակուրի կը նստին: Բայց երբ տակաւին « ի սեղան էին, կ'ըսէ պատմիչը, հասին կալանաւորք » կամենասէ ղրկուած պաշտօնեաներ, որոնք հրաման ունէին Պետրոսը Արծնէ ալ հանել և բանտարկել խաղոյտ առիջ² բերդը որ կարնայ դաշտին մէջ, Եփրատի վրայ ամուր դղեակ մըն էր, և դարբէն ի վեր յունական ազդեցութեան զօրաւոր կեդրոն մը: Պետրոս ճամբայ հանուեցաւ դէպի իր աքսորավայրը 1047 թուին Յունուար 6-ին: Այս օրը Պետրոսի կեանքի դառնագոյն օրն եղաւ, վասն զի քսան և չորս տարի առաջ, Աստուածայայտութեան տօնին, նա իր փառքին գագաթնակէտը հասեր էր, Տրապիզոնի գետակի մը վրայ, (այժմ Մաշգադետին վրայ) երբ վասիլ Կայսեր Մաշգադետին վրայ և յոյներու բազմութեան մը ներկայութեան՝ Զրօրհնէքի հանդէս կատարեց էր, և Կայսրէն մեծապէս փառաւորուեց էր: Իսկ այդ վերջին Զրօրհնէքի հանդէսին, ինչպէս արդար կերպով կը խորհրդածէ Օրմանեան Պատրիարքը, « Այն օրուան ապառուժ գործին վրէժը կը լուծուէր Հայոց գետին վրայ, և մի և նոյն Յոյները, այնտեղ Պետրոսը փառաւորող, այս տեղ Պետրոսը դատապար-

տող կ'ըլլային³ »: Յոյներուն համար նոր բան մը չէր ճաշի ատեն դաւաճանելու սովորութիւնը: Ոչ ապաքէն նոյն Յոյներն էին որ իրենց դաշնակից Հայոց Պապ Թագաւորը սեղանի ժամանակ դաւաճանեցին, անոր արիւնը խառնելով խմած զինին հետ, պարզ այն պատճառով որ նա Յոյն քաղաքականութեան համակիր չէր: Կաթողիկոսին քեռրդին, Խաչիկը, տարուելով հայերէն՝ բանտարկուեցաւ Սեաւ-քար բերդը: Իսկ Անանիա, Խաչիկին երէց եղբայրը, որ Կաթողիկոսին հետ էր՝ անմիջապէս կ. Պոլիս ղրկուեցաւ, ընկերակցութեամբ ներքինի մը, որ « ունէր զպատիւ կէս թագաւորութեան⁴ »: Յայտնի էր որ Կաթողիկոսական գերդաստանին դէմ խուլ հալածանք մը սկսել էր, ինչպէս սկսել էր Հայաստանի թագաւորական գահերուն դէմ:

ՊԵՏՐՈՍ ԲԻԻՋԱՆԴԻՈՆ ՏԱՐՈՒԱԾ

Կաթողիկոսը և իր տեղակալը իրենց բերդերուն մէջ մնացին մինչեւ մերձ Ջառիկն որ կը հանդիպէր 1047 թուին Ապրիլ 19-ին, « և ապա, կ'ըսէ Լաստիվերտցին, հաճեալ զնոսա անտի տարակ ի Կոստանդնուպոլիս առաջի քաղաքին⁵ »: Այսպէս համառօտակի կը յիշատակէ ժամանակակից պատմիչը, մինչ Ուռհայեցին եղելութեան պատուաւոր ձեւ մը կու տայ: Ըստ իրեն, Մոնոմախ թողութ մը գրած է « զի եկեղէն առ նա », և Պետրոս կանաւորով յօժարեաց զնալ⁶ »: Մեծանուն պատմագիրը, Չամչեան, հաշտեցնելու համար Լաստիվերտցիի վկայութիւնը՝ որ եղելութեան բանտարկեալի տեղափոխութեան ձեւ կու տայ, և Ուռհայեցիին վկայութիւնը՝ որ յատուկ փառաւորութիւն մը

ցոյց կու տայ, ուզեր է հաստատել թէ « տեղեկացեալ Կայսերն անմեղութեան նոցին, հրամայեաց առաքել առ ինքն զՊետրոս Կաթողիկոսն, և դարձուցանել զխաչիկ ի յԱնի⁷ »:

Դէպքերն ինքնին պիտի ապացուցանեն, որ Մոնոմախոս հեռու էր անմեղ մեղաւորէն դատելու կարողութենէն. նա երբեք կամք չունէր Պետրոսը ազատ թողուլ, վասն զի Կայսր մը որ նենգախառն երգուեցնելով ջնջեր էր Հայոց թագաւորութիւնը, խիղճը չէր զարնէր, ի հարկէ, կամենասի « չարաչար ամբաստանութեանց առջեւ », մանաւանդ որ նա իր բովանդակ կեանքին մէջ ներկայացեր էր հասարակ մարդու մը նկարագրով, զոր Լաստիվերտցին արժանաւոր դատաստանով մը դատապարտած էր, իր ամէնէն թեթեւ բացատրութեամբ թէ. « միշտ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, զաղբիս մեծացուցանէր... Եւ սա այսպիսի գնացիւք վարեալ զկեանս իւր՝ վախճալնեցաւ... ոչինչ բարի յիշատակաց արժանի եղեալ⁸ »:

Բոլոր եղածը ուրիշ բան չէր բայց եթէ ճարտար զիւանագիտութիւն մը՝ Կաթողիկոսը հայկական հողէն հեռացնելու: Այս ձեւով՝ Մոնոմախոս երկու նպատակի կը ղրմէր, նախ՝ պատուաւոր արգելականութեամբ մը Պետրոսն աչքի տակ ունենալ, հսկելու Հայոց Կաթողիկոսի վրայ, որուն հաւատարմութեան վրայ կը կասկածէր, և երկրորդ՝ արտաքին պատիւներով գրաւել իր ժողովուրդին սիրտը, որուն վրայ Կաթողիկոսին բանտարկութիւնը գէշ տպաւորութիւն մը թողած էր, և յոյներու հանդէպ ատելութիւնը աւելի շեշտած: Յայտնի է թէ Պետրոսն ալ իր ճակատագրին վրայ անստոյգ էր, վասն զի, ինչ-

3. Մաղաքիա Օրմանեան. « Ազգապատում » Պրակ Ա, էջ 1234.

4. Լաստիվերտցի. « Պատմութիւն », էջ 43-44.

5. Լաստիվերտցի. « Պատմութիւն » էջ 44.

6. Ուռհայեցի. « Պատմութիւն », էջ 122.

7. Չ. Մեղայէլ վ. Չամչեանց. « Պատմութիւն Հայոց » հտ. Բ, էջ 944.

8. Լաստիվերտցի. « Պատմութիւն », էջ 72.

1. Լաստիվերտցի. « Պատմութիւն », էջ 42.

2. Լաստիվերտցի. անդ.

պէս կը վկայէ նոյն Ուռհայեցին, մտածեց թէ՛ « գուցէ այլ ոչ բողոք զիս Հոռոմք երանել յԱրեւելք⁹ », այսինքն հայկական հողին վրայ ոտք կոխել պիտի չտային: Ուստի, կաթողիկոսը նախահոգ զգուշու- թեամբ իրեն փոխանորդ հաստատեց քե- ձորդին Խաչիկը և, ինչպէս կը գրէ Լաս- տիվերացին « զձեռնադրութիւն Հայրապե- տարեան ալ տուաւ անոր¹⁰ », որ է կա- թողիկոսական աստիճան և օծում: Եւ մինչեւ իսկ օրհնուած ձէթի Միւռնին ալ նախահոգ զգուշութեամբ լեցնելով չորս հարիւր լիտր քանակութեամբ երկաթի ամաններու մէջ՝ թաղել տուաւ Ախտրեանի ձորամէջը, « մերձ ի դուռն Անույ քաղա- քին » գաղտնապէս, « զի մի գուցէ ան- կանիցի ի ձեռն Հոռոմոց », և պատմիչը կը վկայէ իր ժամանակին համար, թէ « կայ պահեալ մինչեւ ցայսօր ժամա- նակի¹¹ »: Այդ թուականէն մինչեւ այսօր ալ այդ թանկագին աւանդը գտնուած է, և յուսալի է, որ օր մը Խորհրդային Հայաս- տանի կառավարութիւնը պեղումներու ժա- մանակ դուրս հանէ:

Այսպէս կարծելով թէ Խաչիկի կաթո- ղիկոսութիւնը ապահովուած է, Պետրոս ճանապարհ ինկաւ դէպի Բիւզանդիոն, և մոռնալով թէ ինք քաղաքական մըն է՝ ուզեց մուտք մը գործել Արեւելքի մայրա- քաղաքին մէջ, ինչպէս սովոր էր ընել իր ազատ Հայրապետութեան օրով: Յոյները ո՛ր է և է արգելք մը չհանեցին, որովհետեւ զիտէին անոր փառասիրութիւնը, մանա- լանդ որ իրենց հաշուին ալ կու գար որ նա իր սիրած պերճ ձեւերով սոնգանայ ու մխիթարուի:

Իրեն կ'ուզեկցէին, ինչպէս կ'ըսէ Ուռ- հայեցի, Տանեցի ազատները՝ փառաւոր հագուած վարեալք զինուք երեք հարիւր

հեծեալներ, և Վարդապետներ և Եպիս- կոպոսներ և երաժիշտ ու վանական քա- հանաներ՝ հարիւր քսան հոգի ջորիններու վրայ հեծած, և հետի քալող սպասաւոր- ներ 200, ընդ ամէնը 620 հոգի¹²:

Այդ թագաւորավայել ուղեւորութիւնը իր բոլոր պարագաներով՝ կը յիշեցնէ Արշակունեաց առաջին թագաւոր Տիրիթի կատարած ուղեւորութիւնը դէպի հին Հռոմը: Բայց հիմնական տարբերութիւն մը կայ. Տիրիթ կ'երթար հեթանոս և քրիս- տոնէից հաւածիչ Ներոն կայսեր՝ Հայոց թագը ճակտին կապելու, իսկ Հայոց կա- թողիկոսը կ'ուղեւորուէր դէպի նոր Հռոմը, ուր քրիստոնեայ Մոնոմախոս ամօթ չէր համարած Բագրատունեաց թագը Գագիկ Բ-ի գլխէն վար առնելու՝ սպասելով յար- մար առիթին կաթողիկոսական աթոռն ալ ջնջելու, որ աչքի փուշ մը դարձած էր մոլեռանդն Յոյներու աչքին:

ՅՈՅՆԵՐՈՒ ՍԻՐԱԼԻՐ ՎԱՐՄՈՒՆՔԸ

Բիւզանդիոնի մէջ, Յոյները խանդավառ ընդունելութիւն մը ըրին Հայոց կաթողի- կոսին: « Յորժամ լուան զգալն նորա, կը գրէ Ուռհայեցին, « զորդեցաւ ամենայն քա- ղաքն ընդ առաջ », թէ « հանդերձ մեծամեծօք ահաւոր փառօք տարաւ զեա ի Սուրբ Սոփի », թէ « անդ հանդիպեալ քաղաքիւն, այսինքն Մոնոմախոսի, և Պատրիարքի » որ էր հռչակաւոր Կերուլիատրիոսի, թէ « Իշուցին զեա ի փառաւոր տանն », և թէ առաջին օրէն անմիջապէս « Կեցիկեալ մի » որ է հարիւր լիտր արծաթ՝ « ետուն ծախս¹³ »:

Երկրորդ օրը, կ'ըսէ նոյն պատմիչը, Պետրոս կայսեր այցելութեան գնաց, որ կաթողիկոսը զիմաւորելով ընդունեցաւ, և « հրամայեաց նստուցանել յսկիւն սեղիւն » այսինքն ոսկի աթոռին վրայ և շատ սիրա-

լիր եղաւ տեսակցութիւնը: Երբ կաթողի- կոսը ոտք ելաւ մեկնելու համար՝ իր հե- տեւորդներէն Եղիսէ Եպիսկոպոսը, զոր մեր պատմիչը կը կոչէ « համալայեղու և շքեղ », Պետրոսի նստած աթոռը « յիւրե- առեալ » ուզեց մէկտեղ տանիլ, մինչ պալատին սպասաւորները շփոթած՝ թոյլ չէին տար, այնչափ որ վէճը Մոնոմախոսի ուշադրութիւնը հրաւիրեց և եղածին բա- ցատրութիւն պահանջեց: Եղիսէ առջեւ անցնելով՝ պատասխանեց իր կատարով. « ո՛վ թագաւոր, Հայրապետական արոտ է, և ոչ ոք է արծաւի ի նմա նստել, բայց միայն թէ Պետրոսի¹⁴ »: Թէպէտ այսպիսի հայկական օրէնք մը չկար, սակայն կայսր Խնդիրը առանց երկար բարակ քննելու՝ ոչ միայն խնդիր հանել չուզեց, այլ հրա- ման տուաւ Պալատին պաշտօնեաներուն՝ աթոռը առած տանիլ, միայն հեզնօրէն աւելցուց. « Տէր Եղիշէ, 1000 դանկոն է արոտը, պահեցեալ զդա Տեսուն քում, զի մի՛ այլ ոք նստցի ի դմա¹⁵ »:

Եւ « այսպիսի փառաւորութեամբ » Պե- տրոս Բիւզանդիոնի մէջ մնաց չորս տարի¹⁶, և այս շրջանին հարկաւ նա փափաքած ըլլալու էր դառնալ իր հայրապետական աթոռը, բայց կայսր « անդ իւր պահեաց զնա, ինչպէս կ'ըսէ ժամանակակից պատ- միչը, քանզի կասկածէր բողոք ի Հայս՝ թէ կրնար ապստամբեցուցանել զԱւի¹⁷ »: Այս հակիրճ բառերը մէկ կողմէն կը հաստատեն Կերուլոս պատմիչի վկայութիւնը Պետրոս կաթողիկոսի և Հայ իշխաններու փոխա- դարձ քսութիւններու մասին, և միւս կող- մէն՝ պայծառ կերպով կը բացատրեն Մոնո- մախոսի Հայոց կաթողիկոսը այսպէս ար- զեւական պահելու նպատակը: Ճակատա- զօր ինչպիսի դառն հեզնութիւն: Ազգի մը

հոգեւոր պետը, որ հայրենի իշխանութեան դաւաճան եղեր է, և անոր վախճանը փութացուցեր, զեռ կասկածելի եղած էր, թէ Անին յոյներու դէմ ապստամբեցնելու աշխատողներուն զլուխ կրնար կանգնած ըլլալ, և խորամանկ Մոնոմախոսը ար- տաքին պատիւներով կը շոյէր Հայոց Հայրապետը, որպէս զի անոր փառասի- րութիւնը զոհացնելով ծածկէ իր ներքին նպատակը:

Մենք մանրամասնութիւններ չունինք կաթողիկոսին անցուցած չորս տարինե- լուն մասին, բայց Ուռհայեցիի վկայու- թեան համեմատ՝ այդ բոլոր շրջանի տեւո- ղութեան՝ յոյները չղաղբեցան պատիւ- ներով ու փառքերով շրջապատելու իրենց սքսորական հիւրը: « Աւուր աւուր, կ'ըսէ պատմիչը, յաւելոյր փառօք և պատուով ի մէջ Յունաց¹⁸ »: Ըսել է թէ՛ Պետրոս ի մէջ Յունաց՝ բայց ինքզինքը թէեւ սրտով վշտացած՝ բայց ինքզինքը արտաքսապէս համակերպեր էր իր տխուր բախտին: Մոնոմախոս անոր դառնութիւնը ամոքելու համար, զայն իրմէ անբաժան կը պահէր, և Պետրոս, ստէպ « երբայր ի պարտ քաղաքիւն, նախ զՀայրապետա- կան գաւազանն յառաջ տանէին¹⁹ », ինչ որ թեմակալ իրաւասութեան իրաւունք էր և միմիայն Կ. Պոլսոյ Պատրիարքին վերա- պահուած առանձնաշնորհութիւն, բայց կ'երեւի թէ կայսեր խորհրդով Կ. Պոլսոյ Պատրիարքը աչք քոցած էր:

Պետրոսի այցելութիւններուն առիթնե- լով՝ « քաղաքն երկիր պագանէր²⁰ » որ ինչպէս կ'ըսէ Օրմանեան, « Յունական սովորութեամբ՝ եպիսկոպոսներ ողջունելու մինչեւ հիմա պահուած ձեւ մըն է, որուն սակայն կայսրերը չէին սիրեր խոնար- հիլ²¹ »: Ընդունելութիւններն ալ աւելի

9. Ուռհայեցի. « Պատմութիւն », էջ 122.

10. Լաստիվերացի. « Պատմութիւն », էջ 60.

11. Ուռհայեցի. « Պատմութիւն », էջ 122.

12. Ուռհայեցի. « Պատմութիւն », էջ 122.

13. Ուռհայեցի. « Պատմութիւն », էջ 123-124.

14. Ուռհայեցի. « Պատմութիւն », էջ 125.

15. Ուռհայեցի. անդ.

16. Ուռհայեցի. անդ.

17. Լաստիվերացի. « Պատմութիւն », էջ 60.

18. Ուռհայեցի. « Պատմութիւն », էջ 124.

19. Ուռհայեցի. անդ. էջ 125.

20. Ուռհայեցի. անդ.

21. Մաղաքիա Օրմանեան. « Ազգապատում », պրակ Ա., էջ 1239.

ժառանգորդ Դարձնելու համար կայսրը «հրա-
ման տայր՝ մեծամեծաց իւրոց ելանել
ընդդէմ Տէր Պետրոսի»²² ։

Սակայն հակառակ այսչափ գգուանք-
ներով շրջապատուած ըլլալու, Հայոց
Հայրապետը ոսկի վանդակի մէջ դրուած
թռչուն մըն էր, ոտքը Հայրենի հողէն
կտրած, իր հօտին հետ յարաբերութիւն
ունենալէն զրկուած, կը յիշէր անշուշտ

սգաւոր Սին քաղաքը, որուն երեսը տես-
նելու այլեւս ամէն յոյս կտրած էր։

Մինչ Հայոց Հայրապետը վտարի
ափերուն վրայ կ'ապրէր, անդին, Հայոց
աշխարհը, Սելճուքեան թուրքերու աւերիչ
արշաւանքներուն ասպարէզ դարձած,
արիւն կը փսխէր, ուղղակի հետեւանք իր
պետերուն անհեռատես քաղաքականու-
թեան։

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ

(Շարունակելի)

22. Ուռհայեցի. անդ.

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԱՂՈԹՔ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Մանուկներուն համար, ով Տէր,

Բազուկներս քեզ տարածեցի։

Թող ջինջ մընան անոնց աչքերն

Եւ նըմանին միշտ երկնքի։

Գաղտնագողի վշտեր չըզան

Օձերու պէս դարանակալ

Առտուն իրենց սրտին վըրան

Եղեամ քալէ թող մաքրափայլ։

Գոհ են անոնք ըստեղծումէդ

Գառնուկներուն, վարդերուն պէս։

Եւ գիտեն որ քու աչքերէդ

Լոյսը կ'իջնէ ամէն օր մեզ։

Անոնք այսպէս թող հաւատան

Ծիծեռնակի պէս նորաթեւ,

Երջանկութիւնը մանկութեան

Փոքրիկ վարդ մ'է շուրջը տերեւ։

Մի թողուր որ հասակն առնեն,

Ճանչնան աշխարհս ու մարդկութիւնն։

Ամպ մը թեթեւ մեր վշտերէն

Կրնայ ծածկել անոնց գարունն։

Գիտես որ մեր կեանքի օրերն

Հեռու քեզմէ միշտ կը տանին։

Մի գուցէ և անոնց սրտերն

Գէպի սեւ հողը խոնարհին։

Եւ դուն յիշես զանոնք լալով

Որդեկորոյս մօր մը նըման,

Գերեզմաններ՝ սեւ քարերով

Յաւիտենի յոյս չունենան։

Արշալոյսներն ինչպէս ժպտին,

Երբ անմեղ չեն անոնց աչքերն։

Մանուկներուն համար կրկին

Ուրիշ աշխարհ մը ստեղծէ Տէր։

Քեմիա, 29 Մայիս 1945.

Յ Ն Ո Ր Ք

Իրիկնային մեղմ ու տրտում մեղեդին

Շուքերուն հետ տարտամօրէն կը շրջի։

Ու կը դառնայ հառաչական՝ լուսնակին

Աղբրսելով արծաթ թեւեր ցնորքի։

Խաւարին մէջն ալ պարապող սրտեր կան,

Որոնց համար ցընորքն է լոկ ըստեղծանք

Իրենց վերքերը լոյսին տակ ըստացան

Թող ունենան քիչ մը խաղաղ անընդհատ։

Պէտք ունին միշտ երկինքներու աստղազարդ

Ձի գիշերները գերեզման կը թըւին։

Եւ ունենայ իր սիրած սիրտն ամէն մարդ։

Գիշերն է ուր ցաւերն օրուան կը զգացուին

Քիչ մը ցընորք պէտք է այս հէգ սրտերուն,

Որ վաղն իրենց քիչ մ'ունենայ թարմութիւն։

Քեմիա, 3 Յունուար 1948

Կ ' Ո Ւ Զ Է Ի Ե Ս

Մարդկային սէրը մարդերուն հետ կ'անցնի

Կ'ուզէի ես սիրուիլ միայն երկընքէն։

Եւ երկինքն ալ ինձմէ, աւաղ, կը փախչի։

Յոգնած եմ ես ցամբած աղբիւր երթալէն։

Կ'ուզէի ես տրտում սրտերն ըստեղծել

Եւ ըսկսիլ մեր մանկութիւնը նորէն։

Ի՞նչպէս սակայն այսքան արցունք ամփոփել

Յոգնած եմ ես ողբ, հառաչանք լրսելէն։

Կ'ուզէի ես տալ պատառ մ'հաց աղքատին

Որ Աստուծոյ ինքն ալ օրհնէ բարութիւնն